


ՏԻՐԻ ԵՆՈՐԷՆ
Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ
գրութիւն պետք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի
ԳԱՂԻՐԷ (Խաւսկախանի)
Թիւ.

E. TOROSSIAN
Direc.- propr. du journal arménien
ARCHAËLOUICE
LE CAIRE (EGYPTE)
Boîte Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶՈՒԲԵՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

ՐԱՍՏԱՆՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասկէն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	Յրակի 20
Վեցամսեայ	12

ՐԱՍՏԱՆՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ ԱՆՆՈՒՄ
Եւ թ թատարի ծախքը
Խնքագրութեան վրայ է :

Խնքագրութեան ուղղում
"գրութիւն" եւ "եւ տնօրին

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարելի են

ՏԱՐԵՇՐԶԱՆԻ
ԱՒԱՐՏՈՒՄԸ

Ինչպէ՞ս սկսանք և ինչպէ՞ս կը շարունակենք :

—Անչուշտ այս կ'ըլլայ մեր առաջին հարցումը, երբ վաճառականի մը պէս մեր բոլորած միտքեայ շրջանին վրայ իբր հաշուեկշիռ, ակնարկ մը կը նետենք :

Տարին լրացաւ և այդ լրումին մէջ մեր ստանձնած պարտականութիւնը մեր ուսին վրայ կրեցինք. յոգնեցանք, չարչարուեցանք, քրտինք թափեցինք, գետնէ գետին զարնուեցանք և մեր նպատակին մէջ եթէ լիովին չի յաջողեցանք, գէթ բան մը ըրինք :

Ի՞նչ էր արդեօք այդ :
Գննենք անգամ մը, որպէսզի մեր նպատակէն շահած մեր արգար վաստակովը մնացորդ մեր պակասը լրացնենք. բայց նախ քան զայս, երկու խօսք մեր ինչպէ՞ս սկսելուն վրայ :

Մեր ժողովրդեան օգտին յառաջդիմութեանը և սնոր մտային զարգացմանը բաւելու չափ օրաթերթեր, շաբաթաթերթեր, հանդէսներ, մեր մէջ գոյութիւն ունենալը չ'զիտնալու բան մը չէր. սակայն և այնպէս գէթ Գահիրէի հայոց համար տեղական թերթ մը ունենալն ալ երբէք մնասաբեր չէր և չ'պիտի ալ ըլլար :

Մենք բոլոր հայերս՝ ըլլայինք վաճառական, գրամատէր, ուսուցիչ, արհեստաւոր, ըլլայինք պաշտօնեայ և գործաւոր գոնէ մեր հետեւած ճիւղին կամ ընկերականութեան օր քան զօր յառաջացումին համար մեր ամէն մէկուն նախանձախնդրութիւնը պիտի մղէր զմեզ մեր սիրած գործին շուրջը գառնալ և այդպէսով երեւոյթներէն, ձերբերէն, ոգևորութիւնէն մաս մը օրինակել. սակայն ինչո՞վ պիտի ըլլար և երևան բերուէր այդ գործին բուն իսկ ուղղութիւնն ու ճշմարտութիւնը եթէ ոչ թերթով մը. հետեւաբար ձեռնարկեցինք և մենք զմեզ իբր անբաւական մեր գործին ու պաշտօնին նետուեցանք հրապարակ, ի լոյս բերելով պարտւան մեր Առշաղոյսը :

Բայց գիտէ՞ք թէ ի՞նչ ըսին .
Նախ Նգիպտոսի մէջ թերթ չ'ապրիր. երկրորդ համաձայնութիւն չ'ըլլար : երրորդ՝ քաղաքացիութիւն չ'գտնեք. Եւ որովհետեւ անգամ մը գործի սկըջ

սած էինք մեզ փոյթ չ'էր կ'ապրին ու չ'ապրիր :

Սակայն գործ ամեն ձեռնարկ, աւելի մեր մէջ, իր սկզբնաւորութեանը հաշտական կարծեաց և ճիպտունքի քաջքուքներու նշխարակութիւնը, մեր չ'գիտցած բանը չ'էր. հետեւաբար մտիկ չ'պիտի ընէինք մէկուն նախանձէն, միւսին չարակամութիւնէն, փորձառուին խրատէն, անփորձին վարդապետութիւնէն գոյացած աւելորդ անուշխնութիւնները :

Բաւական էր մեզ համար որ անգամ մը ճանապարհ ելած էինք պէտք էր մեր տեղն հասնիլ. այսուամենայնիւ ճիշտ պատերազմիկ վաշտ մը զօրքի նման թշնամեաց անհզ բանակի հետ կուռողի յաղթական երեւոյթը ունէինք. մէկուս ձեռքը նիւթը, իբր ուղմաթերթ. միւսին ձեռքը գիտակը, թշնամեաց շարժումները գիտող. իսկ միւսին ձեռքը բուն զէնքը մեռնելու և մեռցնելու պատրաստ :

Այսպէս ամենքս ալ զինուած ու պատրաստուած, մէկ կողմաւ մէկ նպատակով և մէկ պարտականութեամբ պիտի մղէինք պատերազմը՝ որուն մէջ մեր ցոյց տրուած քաղաքացիական կախում պիտի ունենար մեր վարձատրութիւնը, մեր բարոյական փառքն ու պատիւը :

Սակայն կան, կան ճշմարտութիւններ որոց ծածկուելն կարելի չէ՝ պատերազմի դաշտին վրայ ինկող զինուորը, ինչպէս պատիւ մ'է, պարծանք մ'է իր հայրենիքին, այնպէս եւ նախատինք մ'է գառալիք զինուորը իր կրած անուանը, սուրին ու դրօշակին :

Առշաղոյս ի սկսած կուռոյն մէջ ժախճակաւոր զինուորը՝ որուն գրօջը կը ծածանէր լոկ իր դրօշակին, և իր զինուորի պատիւը լոկ իր շահուն համար, յանկարծ կանգ առաւ և իր սուր ձայնովը գոչեց ըսելով. « ալ իր տաները չ'պիտի գործեն եթէ . . . » իր տաները չի պիտի խօսին՝ եթէ . . . իր տաները չի պիտի պատմեն՝ եթէ . . . ու այնպէս եթէներու շարք մը որոց տակ Առշաղոյս իր շունչը ամուր բռնած, զգացած էր ատենին վազահաս ձմրան անձրեք, հեղեղն ու տեղատարափը, և գիտցած իբր պատերազմող իր յաղթութեան գազանիքը ստանց թուլանալու և ընկրկելու իր մարտին մէջ. մինչև որ օրը ծնաւ գնդապետ :

Առշաղոյսի սեփական տաները եկած էին. և այնուհետեւ այդ տաներով պիտի խօսէր իր ժողովրդին սրտին ու հոգւոյն հետ ու խօսեցաւ. իր կողմը՝ որուն տեւականութիւնը գործնականին մէջ էր :

կիւղի ու սրտագոյլի քայլերով կ'ընթանար. ալ անկէ յետոյ աւելի որոշ քայլերով իր բուն նպատակին պիտի ուղղուէր :

Կը մնար ուրեմն ուղղակի յառաջացումի պատրաստութիւնը, որ կախում ունէր զարձեւալ իր ժողովրդէն ստանալիք քաղաքացիութիւնէն իր ներկայ ու ապագայ բարօրութիւնը երաշխաւորելու համար :

Եւ այս էր բուն իսկ մեզ կողմը. որուն անարժան բայց հաւատարիմ առաջնորդողը ըլլալու համար մեր ուղին ընտրած էինք. նախ՝ անկեղծ ըլլալ. երկրորդ՝ օգտակարը ցոյց տալ և Գ. ըզ. ուր որ կայ մնաստակարը սնոր ճանապարհը կտրել :

Այժմ տեղն է անգամ մը ևս հարցնել մենք մեզի թէ՞ ի՞նչ ըրինք :

Առշաղոյս ին համար ոչ ոք կրնայ արգելել պարծանքով ու ճակատաբաց տալու իր պատասխանը. գոհացում մը ըլլալու համար իրեն համակրողին ալ, չի համակրողին ալ, թշնամուն ալ բարեկամին ալ թէ՛ այո՛. Առշաղոյս իր ստքը ամուր կերպով տեղաւորելու համար, նախ փրկեց ինքզինքը գերի ըլլալէ, վասնզի հոտ էր միակ ապահովութիւնը. ու մեծ զրկանքով, երբեմն զոհորութեամբ. երբեմն քաղաքացիութեամբ և երբեմն սնուր կսկիծով իր փրկութիւնը շահեցաւ. անկէ անդին ի՞նչ կը մնար ուրեմն :

Առշաղոյս ի բուն գործը ու ժողովրդէն ստանալի քաղաքացիութիւնը :

Իր նպատակին մեծ ու առաջին մասը կը կազմէր ընկերականութեան և ժողովրդային շարժման ուղղիչ հետեւիլը, որոց մէջ սպորտը մնաստակարները հանրային ուղղութիւնը կը խանդարէին և որք միշտ խանդարած են գրեթէ :

Թէ ի՞նչ ներգործում ունեցաւ ատոր մէջ Առշաղոյս. և ի՞նչ ոգի ու շունչ ներշնչեց գէպի իր սիրած ժողովուրդը :

Գա շատ պարզ է. Գահիրէի հայ գաղութին անտարբեր ոգին որ այսօր ցնցուած ներշնչումներով ոգևորութիւն մը կը պահէ գէպի իր միացեալ ուժերը, եթէ ոչ իր ներկայով՝ գէթ իր ապագայով կը հաւատացնէ մեզ ամենքս հաւատարապէս թէ՛ ըսէ կամ կանուխ իր յառաջդիմութեան և զարգացումին կը մօտենայ և մի օր իր սեփական համազումներն ու կարծիքները պիտի պաշտպանէ, ինչպէս կ'ընեն ուրիշ ազգաց ժողովուրդք իբր զարգացեալ և քաղաքակրթեալ :

Մեր ձեռնարկի արդեամբ միտմարիչ է մեզ համար տեսնել որ մեր հանրային բու

լոր շրջանակներէն սուսն ու կեղծիքը չի պարտկելու չափ ուղղակիութեամբ անձինք հասած են՝ օգնելու մեզի մեր սկսած սկզբունքին մէջ ։ Եւ այս է սր փաստակարար լարած թակարթն ու սրտայլթը Արգասի աչքերուն ենթարկուելով մեծաշառայ ազնուկով մը կը հրապարակուին իբր հանրային կեղտեր ու զայգացումի արգելիչ միջոցներ ։ Արշալոյս ի համար սուրբախոսութիւն է այսքան անուրանալի յառաջացում, գեռ իր շատ բանով պակաս մնացած նպատակներու գործադրութեան մէջ ։

Մենք՝ բարոյական կուռնի հետ կը մղէինք նաև մեր պատերազմը ուղղակի նիւթակաւորութեան դէմ ։ Նիւթակաւոր հոգը չի թողուց մեզի սակէ աւելին ընել ։ Թէև լարոյականով անկէ աւելին ընելու պարտականութիւնը չունի չ'ըրինք ։

Ամենէն յառաջ ձաղկեցինք ու ձաղկուեցանք մեր շուրջը գոնաւորներուն հետ, սրբ այս ու այն պատճառներով կայս և անուրութիւն ունենին զայստիպի սոցիալիզմն և հանրային շփումն հետ ։

Ոմանք մինչև իսկ մեզ մեկնեցին ծայրայնայն սխալող մը, հակառակ իբր մեր պոռտականութիւնը մեզ ճշմարտասէր ու արդարադատ ըլլալուն, ըսելով թէ՛ նախատող ենք, վիրաւորող ենք և այլն և այլն ։

Սակայն ընդհակառակը ո՛չ ։

Մենք ո՛չ թէ մէկը նախատած ենք իբր նախատիչ իր անձին, երբէք ։ այլ իրեն գործը իրեն համարումներն և իրեն սկզբունքի սխալ ուղղութիւնը ձաղկած ենք, և ոչ սերիչ բան ։

Մենք մեր պատականութեան գիտակցութիւնովը բարեկամ ըմբռնած ենք միշտ մեր թշնամիները, այսօր ալ վաղն ալ առանց կարեւորութիւն տալու թէ թշնամիներ ունինք ։

Արդ ինչով պիտի վարձատրուի ուշանալ այսքան ճիշդ, այսքան զրկում, և մինչև իսկ այսքան աններգաշնակ կեանք, որ ուղղակի գէղը պիտի ըլլայ մեր կառավարած գործին ու աշխատութեան համար ։

Ինականաբար մեր վստահացած ժողովրդին ամեն գասակարգին քաջալերովն որպէսզի իրաւունք չաճին մեզմէ պահանջել աւելին, որ գեռ կը ծփայ մեր մտքի ալիքներու ելիւնդներուն մէջ ։

ԽԻՄԻ.

ԳԱՅԻՐԷԻ ԼՍԱՐ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆԸ

Ու՛ր, գարձաւը՛ Լսարան-Ընթերցատուն, պիտի գոչէ անշուշտ ընթերցողը, մինչև երբ պիտի մտիկ ընենք սա վէճերը ։

Արգասի շատ խոսուեցաւ, շատ գրուեցաւ և բողոքներ եղան, սակայն ձայն բարբառոյ յանուպատի ։ Գործադիր ժողովոյ անդամք իրենց գիտցածէն մազի չափ չ'չեղեցան, այդ գերազանց սպէս գրական մարդիկը իրենց սկզբունքը բոստ կ'իւրեւին սա նշանաւոր խօսքը, « թողունք որ խօսին, թողուն որ գործենք ։ »

Ի վաղուց տեսնուած սովորական երևոյթներէն մին է մեր մէջ, որ մեծ ետանգով ու գործունէութեամբ ընկերութիւն կը կազմուի, ծրարագիր, կանոնագիր կը գծուին, գործի ալ կը ձեռնարկուի, և ապա կ'սկսին կազ և կ'ախ ։

Բայց Գահիրէի Լսարան-Ընթերցատունը բացատրութիւն մը կազմեց առաջին օրէն իսկ վէճեր յարուցանելով իր շուրջը, անանկ որ գեռ Ընթերցատունը չ'բացուած խոսի ու կ'ուրի գունը բացուեցան ։ Եւ եթէ այսպէս շարունակ-

ուի, Լսարան-Ընթերցատունը լոյս սչխարէ չ'ե, կ'սծ վիժածի մը բողոք պիտի ունենայ ։

Այս նորագէտ երևոյթը անշուշտ իր շարժառիթը ունի ։ Անցեալ ասոր օրատուին քանի մը երիտասարդներ գովելի ետանդեամբ Լսարան-Ընթերցատուն մը բան սուր փոփոխութեան փողաքիտ հայ գովի սկանութեան ընթերցաւոր մասին օգտակար և հաճոյս սիլ ժամանց մը ըն՝ ձեռնուր նպատակով, և մանաւանդ երիտասարգութիւնը կ'արելի եղ սծին չափ հետի պահելու համար անբարոյացուցիչ միջոց սրբերուն ապականալ միջոցութեան, որոնք նիւթակաւոր և բարոյագէտ մնայուն վասնի մ'են միշտ անփորձ երիտասարդներու համար ։ Ուստի ընդհ. ժողով գործադրութեամբ ընկերութիւնը օրինական կերպով կազմակերպուեցաւ և Գործ. ժողով մը ընտրուեցաւ ։ Անմիջապէս բոժանորդագրութեան սկսան, թիչ յետոյ ներկայացում մ'ալ տրուեցաւ որով 30-40 անկուց չափ գումար մը գոյացաւ և ամեն ոք ակնդէտ կ'սպասէր ։

Եւ եղև երեկոյ և եղև վաղորդացն օրը ։ Երեք հարիւր վախճուն և հինգերորդ ։ Բայց Ընթերցատունը գեռ գոյութիւն չ'ունի ։ Յետ կար կրկուրի Գործ. ժողովը ծնաւ « Նոր Օր » զոր միկրտեց շրջան Ընթերցատուն մակդիրով ։ Այս թերթը արագան պաշտօնն ունէր ժողովը գեռն բարոյակուն գարգայման սատարել, մտաւորական սնունդ փամբել ։ Ինչպէս սովոր են բուն վարձակաւորական բացատրութեամբ ։

Գործ. ժողովոյ բանիմաց անդամք ուղած են Հայոցս այժմու թափ սուսած վիճակին համապատասխանող բան մ'ընել ։ Ուստի մասքերած են թ առցիկ Ընթերցա . . . չ'է. սխալեցայ, շրջուն ընթերցատուն մը յօրինել, որպէսզի ուր որ ալ ըլլայ կարեան գիւրաւ տեղափոխել, այսօր հոս ։ Վաղը Օմտուրման և և ուրիշ օր մ'ալ Բրէթօրիա կ'ամ Բէթին . . . ։ Սակայն այս չ'քննող գիւրաք մինչև որ գործադրութեան գրուեցաւ, « գիտէք ինչ քրտնաթոր աշխատութիւն ու մեծ ճիգեր եղան ։ քանի՛ քանի՛ անքուն գիւրերնք անցան խորհրդակցութեամբ ։ Կանոնագիրը իրենց նպատակին նպատաստոր տրամադրութիւններ կը պարունակէր յատկիկային ըլլալիք ստարկութիւննց գէմ փաստաբանիւր ։

Չէ՛ մի որ կանոնագրութիւնը կ'արտօնէր Գործ. ժողովը արտասովոր շատ աղբիւրներ ստեղծել, ու յետոյ միթէ սղատ չ'էին ըստ կանոնագրի ։ պարբերական հրատարակութիւններ ընելու ։ Այս և ասոր նման փաստերու կրթնած՝ ժողովին ձարպիկ ասեղնապետը իրեն երեք համարի ընկերներուն հետ քառակ միութիւն մը կազմելով գործի ձեռնարկեց ։ Իբր միջանկեալ չ'մոռնանք ըսել թէ Գործ. ժողովոյ անդամներէն մին չեղոք և միւսը անտարբեր մնացած է, իսկ մէկ երկուքն ալ, անփորձ ու անփութ պից' կոյր գործիքներ են եղած . . . ։

Հոս ներուի մեզ հարցնել թէ « Գարեբական հրատարակութիւն » ըսելով միթէ լրագրի հրատարակում հասկնալու է, և եթէ իրօք այդպիսի գիտաւորութիւն մը սկիզբէ՛ կար ինչու՞ պարզապէս չ'նշանակուէր « լրագրի հրատարակութիւն » ։ Ըսել է թէ կանոնագրով խմբագրուած միջոցին թ սգուն նպատակաւ մը այդ պարբերութիւնը գործածուած է յատկապէս ժամանակին ո՛ր և է կասկած և ուշագործութիւն շարթնցնելով յառաջիկային իրենց ձեռքը գէնք մը ընելու համար ։ Վասնզի այլ է Լսարան-Ընթերցատուն, այլ է լրագրի հրատարակութիւն, իսկ եթէ ընկերութեան ունեցած գումար աւելցունելու վրայ էր խնդիրը — իբր թէ չ'նախորական ձեռնարկի մը համար կազմուած ըլլար այդ ընկերութիւնը — լրագրի հրատարակութիւնէ աւելի գիւրին և ու զանով շահու թիջոցներ չ'էին պակտեր ։ Օրենադիր համար, պատրաստ գրամը փոխանակ այնքան փամաւկ անգործածելի պահելու, Գրեաի Ֆոնաիէի արժեթուղիներ թող գնէին, թիւրեռ լրագրը Իպտէր ու ընթերցատան գունը բացուէր, և կ'մ թէքանի որ խնդիրը շահարկ հատոյթ գանի ու վըրայ էր — սանկ . . . ։ Ետնուրմանի խառնութիւնը անային, ամոսն սարքուն միթէ քիչ չաճ կը քերէր պայտմնաւ սակայն որ « շրջան » ըլլալ լինու-

նար մի Գ. Վարդանին ըրածին պէս (հետաքրքրական էր գիտնալ թէ այս վերջինը գործադիր ժողովոյ անդամներէն, թէ՛ անոնք սակէ բնագործակած են « շրջուն » ի գրութիւնը) ։

Գործադիր ժողովոյ մեր խելացի բարեկամներուն հարցում մ'ալ իրենց քիթի սակ գանուող քաղաքին կրկին ընթերցատուններուն անդամները միթէ իրենց չափ խելք չ'ունէին, իրենց չափ լաւը, օգտակարը մտածելու կարող չ'էին ։ գոնէ մին ձեռնարկէր թերթի մը հրատարակութեան ։ Միթէ իրենց մա՛րդ, միջոց կը պակսէր ։ բայց անոնք անձնակն ո՛ր և է նկատումէ զերծ՝ օրինապահ անձեր, ջանադիր եղած են ընկերութեան օրոյն և նպատակին միայն ծառայել ։

Եւ մինչդեռ հոն՝ այդ երկու ընթերցատունները իրենց բարերար աղբեղութիւնը և գիւրերային դատախօսութիւններով օգտակար արգելանքը ցոյց կուտան իրենց մատուցաբարաներով, հոս մեր Լսար. Ընթերցատան լոկ անունը և փուճ վէճերը կը յուրին ։

Ինչ, Գործ. ժողովոյ անգամք այդքան ուրեմն անձկամիտ ու յաւակնոտ են որ կը կարծեն թէ շարժքը երկու անգամ հրատարակուած իրենց ափ մը թերթը կ'ընայ 20-30 թերթերու, և այլ և այլ հանդէսներու սեզը լեցնել ։

Չէ՛, ալ բաւական է պէտքէ յարգել գիտնալ հատարակութեան կամքը, պէտքէ անձնական նկատումները մէկ կողմ դրուին և փաստաիրական ձգտումները սանձահարուին ։

Իրենց ըրածը նպատակի չեղում, պարզապէս զեղծում մ'է ։

Հիմնագիր-Տնօրէն, Վարժապետ, Ասեղնապետ, Խմբագրապետ և ուրիշ խել մը պետ ըլլալէ տուջ պէտքէ օրինապահ ու ուղղամիտ ըլլալ գէթ հանրային գործերու մէջ ։

Սոյն խնդրոյ մէջ ոչ նուազ մեղադրելի է մայր գիւանին անտարբեր ընթացքը և լուրթիւնը ։ որով իւր պաշտօնին և կոչումին համեմատ իրաւունքը ու աղբեղութիւնը ի գործ գնել չ'է ուղած իրեն ստորագրա մարմնոյ մը վըրայ, և կամ գոնէ սպասով երաշխաւորութիւն մը չ'է առած ընկերութեան գրամի մասին, որ այսօր փճանալու վտանգին մէջ է ։

Տեսնենք այժմ որուն օձիքէն պիտի ըսնէ գործուն () անդամներէն մին արդէն մտակայ գիւր մը քաշուած է, ուր իր թաղատոցէն չարսամիտ ժպտումով մը կ'սպասէ գործին վախճանին ։

Միւսը Օմտուրման գացած է յուրա ու յերկրպագութիւն իւր պաշտելի Մէհաիին իսկ միւս երկուքը . . . ։

Կը լսենք թէ քանի մ'օրէն ընդհ. ժողով պիտի գումարուի, ուր անշուշտ այժմու Գործ. ժողովոյ անգամք իրենց գործունեութեան համարը պիտի սան ։

Շատ հաւանական է որ Ընդհ. ժողովը հուսկ յետոյ ասոնց ըսէ « վարձքերնիդ կատար » և նոր ընտրութիւն մը կատարէ ։

Արդ Գործ. ժողովոյ նորընտիր անդամները ի հարկէ հիմակուաններէն տարբեր հայտացքներ և արամադրութիւններ ունենան՝ որ համապատասխանէ ընկերութեան օրոյն և նպատակին և ամենայն իրաւամբ, ինչպէս հիմակուանները ըրին մինչև իսկ իրաւապետութեան սանձանէն գուրս ելելով, ուղեն զանոնք ի գործ գնել, և անա գծութիւն մը նորընտիրներուն և խմբագրապետին միջիւր ըր ըստ ամենայն հաւանականութեան թերեւս ասեղնապետ չի վերընտրուի ։

Այն ստեղն ինչ պիտի ըլլայ թերթին գործը, ժողովոյ նորընտիր անդամները գուցէ ուղեն իրենց տրամադրութեան սակ տարի մը գոնէ շարունակել, որպէսզի հեղուկեմբ բաժանորդագրներն գանձուելով վաստուած գրամը չի կորսուի ։ սակայն խնդիր է գիտնալ թէ պիտի կրնան թերթին տիրանալ, պատճառներ ունինք այդ մասին տարակուսելու ։

Ինչպէս կ'երեւի, մայր գիւանը, նամանաւոր, Ընդհ. ժողովոյ անգամք մեծ դեր մը ունին կատարելիք ։ տեսնենք թէ ինչպէս պիտի կարողանան փրկել ընկերութեան գրամն և անունն միանգամայն ։

ԴԻՏՈՂ ՄԸ

ԻՍՐԱԻԼԱՆԵԱՒ ԱՆՈՒՅ ԳԼԳԼ

ԲՈՂՈՒՆ ԵՐ

Կրօնքով կ'ըսես, կր փախչիս հետի,
բա՛կ ո՛ն մինչև երբ հետի՛ հետի՛.
Ի՛նչ գու՛ն պատուհան տեսնեմ, փախչիս ներս,
հետս կը խաղաս, կամ զի՛ս կը ծաղրես,
խաղա՛, բայց ըսէ՛ խաղէ՞ք ի՛նչ շահ կայ,
խաղէ՛, բայց խաղէ՛ն ի՛նչ օգուտ կ'ուտայ :
Քեզ տեսած օրս գոյսս էր կարմիր,
նոսն պէս կաթէր կաթկթէր յերկիր .
տեսնողներն ամէն ինձ կը նայէին,
ի՛նչ սիրուն ազէկ մի է կ'ըսէին :
Քեզ տեսած օրս թուշերս էր լեցուն :
ձերմակով խոսած կըր որ սիրուն,
աչքս էր վառ վառ հասակս էր շիտակ,
ինչպէ՛ս որ կ'ըլլայ երկնից մի հրեշտակ :
Հագար ու հագար աղջիկունք պատուական,
կ'ուզէին խօսիլ հետս մի վայրկեան,
ամէնքը թողի հետուեցայ քեզ,
ով՛ կը կարծեր որ այսչափ անգու՛թ ես :
Այն օրը որ սիրտ ես տուի քեզի .
ինչպէ՛ս որ ձիւնը ընդ գէ՛մ արեւի,
այնպէ՛ս հաւեցայ, կ'մտիք մը եղայ,
խեղճուկ զի՛նչու է անուտ վիայ :
Կը սիրեմ կ'ըսես, կր փախչիս հետի,
մի՛նչ խորը ձգես զիս գերեզմանի,
խաղաղս սէրն է մահ, ո՛նք մ'է կեղծիք,
ոյր համար՝ տեղն է բողբոս իմ երկինք :
Ով լըլլալս ետքը կ'իմանաս :
Գահիրէ :

ՎԻՊՈՒՆ

Մեր 94 թիւի Խրատարական յօդուածին 11րդ . տողին մէջ գտնուած « յանցապարտ տեղումն անցեալին վրայ » նախագատութիւնը անուշադրութեան արդեամբ « յանցապարտ տեղումն ապագայի վրայ » եղած է, զոր կը փութանք ուղղել :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի Տ Ա Ւ Ի Ա

Ումպէրթօ Ա . ծնած էր 1844 , Մայիս 14 ին . 1868 ին Սափուայի Մարկրիտ Իշխանուհուն հետ ամուսնացած էր , յորմէ մէկ զաւակ միայն ունեցաւ . Վիգթօր-Էմմանուէլ , նաբալիի Իշխան՝ որ ծնած է 1866 նոյթ . 11 ին 15 րդ . զօրաբանակին ընդհանոր տեղակալն էր և ամուսնացած էր Մօնթէնէկրօյի էլէն Իշխանուհուն հետ :
Նաբալիի Իշխանը ու Իշխանուհին անցեալ շաբթու երուսապէ՛մ էին և Սուրբ տեղերը կ'այցելէին : Անտի մեկնեցան իրենց զբօսանալով : Մովսէս ճամբորդութեան միջոցին է որ գահաժառանգ Իշխանը պիտի իմանայ այն սոսկալի սուղը՝ որ զինք կը պատէ, և այն ծանրագոյն պատասխանատուութիւնը՝ որ իր վրան պիտի առնէ :
Ումպէրթօ թագաւորը արգէն երկու անգամ նմանօրինակ ոճիրներու քիչ մնաց որ զո՛հ պէտի ըլլար : 1878 նոյեմբեր 17 ին նաբալիի մէջ ձիւնապարտ Բասանանդ անունով մէկը՝ զանակի հարուած մը փորձեց տալ թագաւորին . սակայն հարուածը վրիպեցաւ և մարդասպանն ալ իսկոյն ձերբակալուեցաւ նախարարաց խորհրդին նախագահէն, որ թագաւորական կառքին մէջն էր : Այս մարդասպանը էլլապ կղզւոյն մէջ բանտարկուած և ցարգ ող է :

Չորս տարի տալ ալ երբ Հոսովի մէջ կրկնեցրու հանգիսին կ'երթար, Աշխարթօ անուն մէկը փորձեց գանակի հարուած մը տալ թագաւորին : Վեհապետը, միշտ հանդարտ և անխաղ՝ մարդասպանին բազուկէն բռնեց, որ իսկոյն ձերբակալուեցաւ :
Աշխարթօյի դատը դեռ ամբողջովին փակուած չ'է, որովհետեւ ոստիկանութիւնը կը ջանայ հաստատել թէ՛ արքայասպանը դատակիցներ ունէր որոնց կասկածելիներէն մեծ մաս մը բանտարկուած են և իրենց վճռոյն կ'սպասեն :

ՉՈՒՆՅԵՐԻԱ

Պէրնի մէջ Գործաւորներու միջազգային պաշտպան միութիւնն անուսով ընկերութիւն մը հիմնուեցաւ որոյ անդամներն գաշնակցական ժողովներու ամենախալուն անհատներէն կը բաղկանայ, և որոյ նախագահն է Պ . Յրէյ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՀԻՒՆԻ ՄԵՋ . Իտալիոյ թագաւորին մահուան լուրը ցաւալի տպաւորութիւն մը թողուց գահիրէի մէջ : Գեասանատունը և Հիւպատոսարանը ու շատ մը Իտալացի հպատակներ և պաշտպաններ իրենց դրօշակը կէս պարզեցին սգանշան կապով մը : Շատ մը Իտալացիներ հիւպատոսարանը գացին, իրենց խորին յուզումը ու ցաւակցութիւնը Իտալիոյ կառավարութեան ներկայացուցիչներուն յայտնելու համար :

ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

Բարիկ 27 Յուլիս . Ծրանտա Մաշկաթը ընտրեց իբրև անուխի կայան և ծուխ բեռնող շողկնաւ մը զրկեց հոն : Լիհուհչունի միշտ ճանկհայ է կը շարունակէ հաստատելու թէ՛ գեասանները ողջ են :
Բարիկ 28 Յուլիս . Հրովարտակ մը հրատարակուեցաւ որ կ'արգիլէ զէնքերու ներածումը Չինաստան կամ յարակից երկիրներու մէջ :
Ուաշինկթըն 27 Յուլիս . Նախագահ Մարքիսի հաճութեամբ ընդունեց Բէքիսի վրայ յառաջխաղացութիւնը յետաձգելու առաջարկութիւնը մինչև գեասաններուն վերադարձը կամ ազատումը :
Լոնտրա 28 Յուլիս . Իրէթօրիայէն Լորտ Ռօպէրթօ կը հեռագրէ թէ՛ 25 ին երեկոյան միջոցին զօրավար Յրէնջ Միտտէլպուրի հասաւ : Թշնամին խառնաշփոթ ետ կը քաշուէր : Չօրավար Հրէթըր գրաւեց Փուրէսպուրիկ ուր կը գտնուի Սթէյն : Գրօնչգատի մէջ Տըվէթ զօրավարին մէկ եղբայրը զէնքերը յանձնեց :
Հոսով 30 Յուլիս . Ումպէրթօ թագաւորը Մոնղոյի մէջ երեկ իրիկուն սպանուեցաւ :
Մոնղա 30 Յուլիս . Երէկ իրիկուն ժամը 10 ին Մոնղոյի մէջ Ումպէրթօ թագաւորը սպանուեցաւ, մարդասպանը Անթէլօ Պրասի, թագաւորին վրայ ըզվէրի երեք հարուած պարսկեց . թագաւորը մեռաւ :
Մոնղա 30 Յուլիս . Ումպէրթօ թագաւորը՝ ըմբիշներու մրցման մրցանակաբաշխութիւնէն ետք և կառքը նստած պահուն

սպանուեցաւ : Մարդասպանը որ Պրէսսի կը կոչուի, ատրճանակի երեք հարուած քաշեց գնդակներէն մինն . Վեհապետութեան ճիշտ սրտին մէջ խրեցաւ . քանի մը վայրկեան վերջը թագաւորը մեռաւ : Պրէսսի ձերբակալուեցաւ :
Բարիկ 28 Յուլիս . Զօրավար Կազըլէ թագու մեկնեցաւ :
Հոսով 28 Յուլիս . Իտալիա Չինաստանի մէջ զէնքի ներածումը արգիլեց :
Լոնտրա 29 Յուլիս . Երեք նոր պատերազմական նաւեր եկան Շանհայ ուր ամեն բան հանգարտ էր . 2500 Չինացի զինւորներ Վօչինիկի բերդերը կը գրաւեն, 3,000 զինուորանին մէջ կան և ժամէ ժամ ուրիշներ կուգան :
Հակա-Օտարական ազգեր փակցուեցան Վիւ-Շօյի մէջ :
Բարիկ 29 Յուլիս . Օտար գեասաններու մասին Չինական ազգերէ եկած ապահովիչ լուրերուն ճշտութեանը վրայ Լօնտրայի և Ս . Փէթերսպուրկի դահլիճները կը տարակուսին :
Բարիկ 29 Յուլիս . Լորտ Ռօպէրթօ կը հեռագրէ թէ՛ զօրավար Յրէնջ գրաւեց Միտտէլպուրիկը :
Բարիկ 28 Յուլիս . Պարսից Շահը Բարիկ հասաւ . կայստանին մէջ ընդունուեցաւ Հանրապետութեան նախագահէն և նախարարներէն :
Լոնտրա 29 Յուլիս . Բուէնլու հրամանատար իւրկացութիւնը խնտ յուսահատական գտնելով, զինաց ազար առաջարկեց, որ մերժուեցաւ, յետոյ անհատութեան մասին զանազան պայմաններ առաջարկեց, որ նոյնպէս մերժուեցաւ :
Հունթէր, Բլէնան, Ռուսուր, Բաժէ Պրիս և Համիլթօն զօրավարները ամսոյս 25 ին ձուրիչպուրկի մէջ թշնամունջ հետ զարնուեցան . երեք օր պատեւազմեւէ և լեռներու կիրճերուն մէջ բռնի մտնելով զայն գրեթէ ամուր գիրքի մը վերածելէ յետոյ՝ գիշերուան թանձր մթութեան մէջ անցքին ամենազգուար գիրքը գրաւած են :
Պօէրները ետ քաշուելով խոր փոս ճամբաներուն մէջ ապաստանեցան, ուր տեղէն անկարելի պիտի ըլլայ իրենց բռնակառքերը ազատել :
Բուէնլու հրամանատարի անձնատուութիւնը անմիջական կերպով գործադրուեցաւ :

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱՔԵՐ

Բարի նույնի 23 Յուլիս թուոյն մէջ հետեւեալները կը կարդանք .
Տար տաներկու օրէն ի վեր Բարիկի օդը նման է հասարակածի երկիրներու կամ Գալիֆօռնիայի տաք օդին :
Մէկ դարէ ի վեր այսչափ շոգ չ'էր ըրած, կը գրէ Բարի նույնի . շուքի մէջ շերմաւալը 38-40 աստիճան նշանակած է . իսկ արեւին տակ մինչև 48 աստիճան ելեր է . աստիճան մը՝ որ ամենատաք երկիրներու մէջ իսկ քիչ կը պատահի :
Տարին հետեւանքներն ալ շատ ողբալի եղած են, Բարիկի մէջ միայն 25 հոգիներ յոգաշար մեռած են և շատ մը հիւսնազուրկներ յառաջ եկած :
Տիւղ տաքերուն պատճառաւ մաքուր ջուրի նուազութիւն ալ առաջ եկած է :
Փ . Պոլսեցի Տ . Ռուբէն Յակոբեան Յուլիս 17 ին տեղի ունեցած քննութեանց մէջ յաջողութեամբ անցուցած է իր թէզն :
Իւր յաջող քաջասուութիւններով

կ'ըսէ Բաբի նույնի, իւր թեզը քննադատող ահանաոր բժշկաց գոհունակութեանը աշխատանքս :

Տր. Ռուբէն Յակոբեան՝ նախ քան իւր թեզը անցնելը, արդէն Բարեգի նշանաւոր Բրիտիսի մը բժիշկը նշանակուած է եղեր, որ ապագայ յաջողութեանց գոհունական ապացոյցներէն մին կրնայ համարուիլ :

Ապագայ մեծամեծ յաջողութիւններ կը ցանկանք մեր երիտասարդ ազգակցին :

—Արդէն մենք գրեցու առիթը ունեցած ենք Մշեցի Պ. Տիգրան Դիմաքսեանի մասին, երբ սա գրեթէ մէկ տարի առաջ (Եփոյնի քան զ'Ե շուն) ի գոհունակութեան առջեւ բանալ առաւ իր յարատեւ աշխատութեամբ : Այս ամուսնիկները այս երիտասարդը իւր առաջին տարուան քննութիւնները շատ մեծ յաջողութեամբ անցուց և շատ բարձր նոթեր առաւ :

Ուրախալի է մեր գեւուտի երիտասարդ ազգայնոյն յաջողութիւնները, մանաւանդ որ այդ երիտասարդը նիւթական անձուկ գըրութեան մը մէջ կը գտնուի :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅԹՈՒՆ

Ծերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերաբերեալ հեղինակութեան երկրորդ ֆորման ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափարոյք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան գիտնել «Արշալոյս» ի ժողովրդական ՏՊԱՐԱՆԸ, ուր հեղինակը կ'գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 29 ՅՈՒՆԻՍ 1900					
3929	2921	2559	422	2748	1769
2954	4864	6758	5484	597	1176
8098	9018	381	4894	6551	6135
6156	5198	4112	294	8208	7476
3076		273		5911	

ՀԱՒԱԲԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՆԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՌԻՁ

Ահանաւոր և հեղինակաւոր երամիշտներու աշակցութեամբ հռաձայն և բառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափարողներն կամ բաժանորդագրուիլ ուզողներն, կրնան գիտնել «Արշալոյս» ի ժողովրդական ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տիար Մ. Հայկունի Բժիշկ ուղեորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Մարդկային Կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յանձնած է Արշալոյսի ժողովրդական ՏՊԱՐԱՆԸ : Գնել փափարողք կրնան հոն գիտնել :

Քանի մը օրինակ մէկ անգամէն գնուլին 20 առ հարիւր զեղջ կը լինի :

Տպագրուիլն ժողովրդական ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻՁԻ ՍԿԻՋԸ

Օսկանիչե դեղատանին դիմացի փողոցին ձեռք.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8 :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին :

Այցեխարձեր, Երջարներակներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մակարդներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տնւեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահաշիւներ և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՍԻ ԵՆ :

ԿՈՊԵՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՍՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉՍՏՈՒՆ

Տասնեկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է :

Պսակայ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքի մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Կոպէսի Շարիա Կանոնի Օրիէլ ՆԵՐԷՐՏՍԻ ճիշտ գիտնող թիւ 3 արարթումնիկ երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրսը կուտներ ի հարկին :

Ակրանիսիան բնական մեծութեամբ Կենդանագիրներ ամբողջական և քենայով որոնք երբէք չ'են աւչուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միկետարիտ :

Իւղաներկ և շրաներկ պատկերներ և ըն :

Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունին ուրքուշ, ճեպէրքընալ և ըն :

Իրեն գիտնող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր իջ նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՐՈՐԸ

ԵՐԱՇԽԱՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենին և աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է բնորոշութեան մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ Իրահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԵԱՆ

Ի Շարիա Գոր-Պէյ, թիւ 20

Իր Ձրի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կ'են օրէ առաջ ժամը (ը. Ե.) 9էն 11 սրտած ըլլալով կը ինգրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիտնող ուզող ազգատ հիւանդներու :

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոստանեան պատիւ օւնի ծանուցանել Արդոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մուրի խանութի մէջ պատրաստել ԵՆՄԵՆԻ խորձին ամենաբարձր և անխարդախ տեսակէն իրեն գիտնող յաճախորդներ օրան 16 զըշ ոչ չի հաշով, զբաւ ֆաբէ պիտի կրնան գնել : Կըսոյ մէջ ալ ուզողանութիւն գտնելով :

ԳՅԲԵ ՈՒԳՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և չըլակայից գրասէր Հայ հասարակութեան դիւրութիւն մը տալու մտքը կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իսաական, Իսրայէլական, Իսլական, Իրական Արաբական, Բանասիրական, Վիպական և այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիտնալ մատչելի պայմաններով և և ք բերել՝ գիտնող Տիար Կ. Նաւասարդեանի, Գալատեան վարժարան Հայոց Ի Գահիրէ :

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՌԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՐԱՐՈՅԹ

Այսին Շարա Գուրի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ սկզբներ :

Կը զագրեցնէ վայրկեանայէն ախտայից սուերը, ամբողջականորապէս մեթոսով իւր պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինտերոս և բեքնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած անկաններուն յովուներութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճիշտ գարմանում, ամեն օր կէսօրէ ԵՍՔ Ժամը 3-5 :

Այլ-ԳՄԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յԱղեքսանդրիա :